

ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐՄՐՈՒՆՈՒ

(Հարունակութիւն 1)

ԳԼՈՒԽ Դ.

ՊԱՐԻԶԻ ԵՒ ՆԱՆՍԻԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Պըօֆ. Պիտրէ կարծէք Հիպնոտիսմի մասին, —Պարեղի և Նանսիկ ուսմունքների տարգերութիւնը. —Բնութիւնը ոստումներ չեն անում. —Միջանկեալ դըռութիւններ կամ միջաշրջաններ, —Կիսանզգայութիւն. —Կիսաքարացումն. —Նրա յատկանիշները:

Պրոֆ. Պիտրի կարծիքը

Մենք վերջացրինք Մեծ Հիպնոտիսմի պատմութիւնը ակնակէս, ինչպէս աւանդում է մոզ պրոֆեսոր Շարլօն ու նրա դպրոցը Տեսամոք, որ փորձնական, ապահնքն արևեստական Հիպնոսը երեք աստիճաններից է բազկանում (Լեթարգիա, Կատալեպսիա և Սոնամրուլիսմ) և ծանօթացանք այս աստիճանների լատկանիշներին. Միննոյն ժամանակի, մի որ և է հիպնոսական երեսով նկարագրելիս, մենք ցուց տվեցինք, որ ազդ չափանութիւնը նկատում է և առօրեակ կեանքի մէջ, հիպնոսից դուրս էլ Յաւակցաբար տեղի սղութիւնը սահմանափակեց մեր ցանկութիւնը՝ իւրաքանչիւր հիպնոսական երեսովի կողքին դնել և համանման երեսովներ հիւանդների, հիստոերիկ և մինչև անգամ առերես առողջ անձերի կեանքից. Սական առաջ բերածներս էլ բաւական են արդարացնելու ակն մեծ սկզբունքը, թէ հիպնոսական երեսովները բոլորը նկատուած են նա և հիպնոսից դուրս Պրոֆ. Պիտրը (Pitres), որը մօտ ժամանակներս մի

1) Տես «Մուգմ» 1891 թ. № 12; 1892 թ. № 1.

մեծ աշխատութիւն հրասարակուց հիսուսիրակի և հիպնոտիամի մասին, ասում է.

«Հիպնոսիլու միջոցները անում են այն, որ երեան են հանում որոշեալ նախագոյն հիւանդական նշանները Մի խօսքով՝ արդի գիտութեան համաձայն, պէտք է հիպնոսը ընդունել իրք մի շարուցած և ժամանակաւոր հիւանդական դրութիւնն, որի խօսա փոփոխական և երբեմն խիստ բարդ արտավազութիւնները համանիշ են այն արտավազութիւններին, որոնք նկատում են հիսուսիրակի, մէջ,

Պարի զիր և նանսի դպրոցն երբ.

Պրոֆեսոր Պէտրի ակտ խօսքերը միանդաման ընառողութ են Պարիզի դպրոցի ուսանունքը. — Հիպնոսը ոչ աչ ինչ է, եթէ ոչ արևեստական հիսուսիրիա, և քանի որ հիսուսիրիան մենք ընդունում ենք իրք հիւանդութիւն, ուրեմն հիպնոտիսմն է մի արևեստական տկարութիւնն է.

Ահա այն առաջին կէտը, որը բաժանում է Պարիզի դպրոցի ուսմունքը Նանսիի դպրոցի վարդապետութիւնից, որի համաձայն հիպնոտիսմը առողջ դրութիւն է.

Նրկորդ բաժանող կէտ.

Հարկօն ու նրա հետեւողները ուսումնասիրել են հիպնոտիամը բացառապէս հիսուսիրիկ (Նեարդալին) հիւանդների վրա և պնդում են, որ ալդ տեսակ հիւանդները միան ընդունակ են հիպնոտիլու, այն ինչ Նանսիի պրոֆեսորները կարծում են, թէ հիպնոտական երեսիթները կարող են նկատել և բոլորովն առողջ անձերի վրա ու պնդում են, թէ համարեա ամեն մարդ կարող է հիպնոտակը,

Մենք տեսանք, որ Պարիզի դիտականները հիպնոտական քունը բաժաննել են երեք շրջանների, — Նանսիի դպրոցը աղջակախ բաժանումն արևեստական է համարում և ասում է, թէ ալդ երեք շրջանները երեք չեն նկատել Նանսիի մէջ. Ակա վերջին դպրոցի կարծիքով հիպնոտի շրջանները աւելի շատ են, և Լիեբօն բաժանում է հիպնոտը վեց առողջանների.

Յիշենք, որ կաէ մի չորրորդ կէտ էլ Նանսիի պրոֆեսորների կարծիքով ամեն ինչ հիպնոտիամի մէջ ներշնչումը է առաջանում, Հիպնոտիլու միջոցները (թէ մեղմ և թէ լանկարծակի) քնեցնում են ենթակալին մի, աչ ն ներշնչման միջոցով, նրբ որ ես, օրինակ, մի անձի ստիպում եմ մի առարկակի վրա սեղուել իւրհակացքը, ալդով (ասում են Նանսիեցիք) ես համոզում եմ նրան, որ եթէ նա նայի ալդ առարկալին, անպատճառ կը քնի Ուրիշն, ալս դիտնականների կարծիքով, հիպնոտիլու այն բազմաթիւ միջոցները քնեցնում են ենթակալին ոչ թէ լարւածելով նրա տեսանելիքը, լսելիքը և ալին (տ. գլ. Ա.), ալլ աղդելով հիպնոտիզի ամբողջ հոգեկան աշխարի վրա, ալսինքն ներշնչման միջոցով. Ուրիշն ալ Փիզիկական միջոցները աւելորդ են և կարող են փոխարինել բերանացի

ներշնչման, Այս է պատճառը, որ Նանսիում գործ է ածում միաւն ներշնչակին միջոցը.—Ենթակալին հրամալում են քնել՝ և նա քնում է, Այս թէորիալով հիպնոսողը քնումէ, որովհետ նա համոզած է, որ հիպնոսողը կարող է նրան քնեցնել, որ այս ինչ առարկալին նաևիս, այս ինչ ձախը լսելիս, նա չի կարող չը քնել... Հիպնոսական բոլոր երևովները՝ անզգական քունը, քարացումն, քնալածութիւնը—այս բոլոր օտարութիւնները և բաղմատեսակ երեսովները ներշնչման հետևանք են:

Պարիզի դպրոցը (ինչպէս տեսանք) չի հերքում ներշնչման ազդեցութիւնը, բայց նա ալդչափ ընդարձակ չի կարծում նրա զօրութիւնը, և չժմարիտ, որ կալ ալժմ փաստերի մի մեծ կուտակումն, որը ապացուց է Նանսիի գիտնականների կարծիքի ծալրավեղութեանը ներշնչման վերաբերութիւնով, Ցաւակցարար այս փաստերը, սոսկ գիտնական լինելով չեն կարող բերել ախտեղ¹⁾:

Ահա այն գլխաւոր կէտերը, որոնք բաժանում են հիպնոտիալի երկու դպրոցները:

Ամբողջ գիտնական աշխարը հետևում է այս դպրոցներից մէկի կամ միւսի ուսմունքին, և ուրիմն, հիպնոտիալի մասին մի հեղինակութիւն կարդալիս, պէտք է աչքի առաջ ունենալ, թէ որ շկոլալին է պատկանում հեղինակը, որովհետև այս հանդամանքը մեծ ազդեցութիւն ունի հիպնոտիական երևովների դասաւորութեան, նրանց մեկնութեան, նրանց բառկացրած կարենութեան վրա:

Սական այս տարբերութիւնները, որոնք մի քանի տարի առաջ կարծեն անհաշտելի կերպով բաժանում էին երկու վարդապետութիւնները, մի անանցնելի անդունդ էին փորել նրանց մէջ, այսօր անչափ ահադին չեն թւում ալլ ևս նորագոյն հետազոտողները աշխատում են, եթէ ոչ հաշտեցնել, գոնէ մօտեցնել հակառակ բանակները, գտնելով, որ զանազանութիւնը երկու ուսմունքների մէջ անքան մեծ չէ, որքան կարծում էր:

Գուցէ երկու կողմից էլ չափազանցութեան են հասել, գուցէ ճշմարտութիւնը երկուակ մէջ տեղնէ, գուցէ հարկէ չը հպատակել կուրօրէն այս ինչ կամ այն ինչ գաղափարին, ալլ, ճշմարտից չը հեռանալու համար, զեկավարել երկուակ էլ, ուսումնասիրնել այս երկու բանակների բարեխիղճ հետազոտողներին էլ...

Մենք չենք հանդնում մտնել այն բանակուփ քննութեան մէջ, որը փաղուց արդէն անգաղար վարում են միմեանց դէմ Պարիզը ու Նանսին,—ոչ մեր ուժերը և ոչ այս աշխատանքի շրջանակը մեզ թուլ կը տակն ալլ—Մենք կամնում ենք միան կանգ առնել երկու լալտնի միջաշրջան-ներին վրա:

1) Ցանկացողները կարող են կարգալ (այդ մասին գաղափարը ունենալու համը) Binet et Féret-ի «Le Magnétisme animal» գէրքը, «ըսը Մարդմանան է և ուսերէն լիզուով»—«Ժամանակակից մագնետիզմ» սու. Բնաւ և Փերը.

ԲՆԱԿԹԻՒՆՔ ԱՎԱԾԱԾՄՆԵՐ ՀԻ ՄԱԿԱԾ

Պրոֆ. Շարիսն և Միշեն, բաժանելով հիպնոսական քունը երեք շրջանների (ինչպէս մենք պատմեցինք) երրէք չեն այնդեւ թէ անպատճառ թող է ու ու հիպնոսուածն երն էլ այս շրջանների երեսլթները պիտի ներկայացնեն, նրանց այս բաժանումն, որը արգէն դասական ածականն է կրում, նպաստակ ունի աւելի հեշտ կերպով դասաւորել հիպնոսի բազմաթիւ երեսլթները, և աշխարիս որ, հիպնոտիսմի բոլոր բազմագողն արտապատութիւնները զնանքում են լիթարգիփափի, կատալնապիտիսի և սոնսամբուլիտիսի մէջ, Բայց այս երեք շրջանները իրանց հարուստ լաւանութիւններով, իրանց հնանողութիւնով և բնաօրոշ դեերով նկատում են միան շատ սակաւ հիտաերիկ, ան էլ, ինչպէս ասում են, հիպնոսական կրթութիւն ստացած հիտերիկ անձերի վրա, ամինքն այն անձերի, որոնք մի քանի անգամ արգէն ենթարկել են հիպնոսի, Շարիսի պէս մեծ փորձւած գիտնականը, իւր աշխարահնչակ հմտութիւնով, բարեխնզնութիւնով և զգուշութիւնով, երրէք չէր կարող ալզպիտի մը հակադիտական կարծիք լավանել, թէ հիպնոսի շրջանները կատարելապէս սահմանափակ են և իրարից անկախ ու իրար հետ ոչ մը բարաքերութիւն չ'ունեն, Նա ամենից լաւ զիտէ, որ բնութիւնը ոստառմներ չի անում, ինչպէս ասում է լատինական առածը, և որ հիպնոսի շրջանները սահմանափակւած չեն ու նրանց մէջ զադարկութիւն կալ,

Զը պէտք է կարծել ուրիմն, թէ լիթարգիալի և կառալեպիալի, կամ կատալեպիալի և սոնամբուլիալի, մէջ մի պատ է քաշած, կամ մի անդունդ փորած և, որ, մի շրջանից միւսը անցնելու համար, հիվանսածը թռչում է ալս պատի, կամ ալս անդունդի վրալով, Ընդհակառակը, երբեմն մի շրջանից միւսն անցնելիս, հիպնոսսածը կանգ է առնում կէս ճանապարին և այն ժամանակ ներկաւացնում է մեղ առաջւա և նոր շրջանների երեսքների մի խառնուրդ:

Ալսպէս, լեթարգիակից կատակեպսիակի անցնելուս, հիպնոսածը կարող է մի քանի ժամանակ կանգ առնել ապ երկու շրջանների մէջ, մի ոտը անզգալիան քնի, միւսը քարացման մէջ, ներկալացնելով մի կողմից լեթարգիակի նշանները, մրւա կողմից՝ քարացման երեսները:

Այս միջանկեալ ցըջանը տախանի է և իսաւան զգականութիւն—
Կիսաքարացումն անունով:

Բացի այդ, քարացման քնից սոնամբուլիս անցնելիս, հնթական կարող է նոյնպէս կանգ առնել կէս ճանապարին, մի ոտը քարացման, միւսը քնակածութեան մէջ, ներկալացնելով մի կողմից առաջինի, միւս կողմից երկրորդի նշանները:

Այս երկրորդ միջանկեալ դրութիւնը բավոնի է Կիւաքարացումն—Կիւաքնածութիւն, կամ չբացութիւն, կամ թոշ-

չութիւն, կամ Փոքր Նիպն ոտիսմ անուներով Մենք մի քանի
խօսք կ'ասենք արատեղ առաջին մրջաշրջանի մասին, իսկ Փոքր Հազնո-
տիսմին, իւր մած կարևորութեան պատճառով, մի առանձին զլուս
կը նւիրենք.

ԿԻՍԱԱՆԶԳԱՑԽՈՒԹԻՒՆ-ԿԻՍԱՔԱՑՈՒՄՆ (Demi-Lethargie—Démi-Catalépsie).

ՄԵՆՔ առանք (Նեթարդիա Գլ. Ա.), որ անզգական քնից քարա-
ցումի անցնելու համար, մնեք բաց ենք անում ենթակալի երկու աչքերը
Նթէ մնեք, փոխանակ երկու աչքերն էլ բանալու, մի աչքը միայն բա-
նանք, հիւանդի մի կողմը մրան կը ընկնի քարացման մէջ, մինչդեռ մրւոր
դեռ անզգանութեան մէջ է.

Ակաղէս, եթէ մնեք լեթարդիկի աջ աչքը բանանք, ձախը խուփ
թողելով կը անսնենք, որ նրա աջ կողմը մրան քարացման շրջանի
նշանները կը ներկալացնի Նթէ մնեք բարձրացնենք նրա աջ ձեռք սա-
կը քարանակ և երկար պարզած կ'միասի ինչպէս մնեք նկարագրել ենք
ալի, ան ինչ ձախ ձեռք թուլացած վալր է ընկնում Ընդհակառակը, երբ
հիպնոսածը քարացման մէջ է, ալսինքն. աչքերը բաց, Նթէ աչքերի մէկը
ծածկենք, նա կ'ընկնի կրկին անզգական քնի մէջ, Ան ժամանակ բաց
աչքի կողմը կը ներկալացնի դեռ քարացման շրջանի նշանները, իսկ փակ
աչքի կողմը լեթարդիալի երևոլթները.

Ահա Իիշէի փորձերը:

«Եթէ քարացածի առաջ մի լացաման, մի ջրաման և սապոն դնենք,
ենթական կը սկսի լացել, Ազդ ժամանակ, եթէ նրա աջ աչքը ծած-
կենք, աջ կողմը կ'նկնի անզգանութեան մէջ և աջ ձեռք թուլացած վալր
կ'նկնի, ան ինչ ձախ ձեռք կը շարունակի լացել».

«Եթէ մնեք մի քարացածի ձեռք մի հլուն ու թել տանք, նա կը սկսի
գործել արագութիւնով Հիմի եթէ մի աչքը ծածկենք, համապատասխան
ձեռք կը զագարի գործելուց, ան ինչ մւաք կը շարունակի իւր շար-
ժումները».

Ակաղիալ փորձեր արւելեն բազմաթիւ գիւնականների ձեռքով և
ցուց են տալիս, որ անզգական քնի և քարացման մէջ մի մրջանկեալ
զրութիւն կալ, որը ամեն իրաւունքով կարելի է ալս երկու շրջանների
խանուրդ համարել.

ԳԼՈՒԽ Ե.

ՓՈՐՔ ՀԻՊՆՈՏԻՍՄ—Petit hypnotisme

կամ

ԹՈՎՉՈՒԹԻՒՆ (ՀՐԱՊՈՅՑ) — Fascination Օնвօրոշելու

ԲԺՇԿ ԲՐԵԽՈՒ ՓՈՐՃԵՐԸ — ՀՐԱՊՈՅԸ ԵՐԼՈՒ ԹՀԱՑՑՆԵՐԸ. — Ակնակցութիւն կամ հայեցքի կցորդութիւնը. — Դուռածու և հանգեցն մոդեխոսոցները. — Հրապոյր կէնդ անհների մէջ. — Բրեմօնի Թավութիւնը. — Թովչութիւնը երկույթներ (քարացման և քննայածաւան արտայատութիւններ). — Ակնակառութիւն — «Չար աշք» աշքով տայլը. — Արքանի դէպքը. — Թովզովքառական սնապաշտութիւնների բացատրութիւն. — Փոքը Ակնասոնի անունները. — Հիպնոտը բաղկանում է երեք շրջաններից և երկու մեջաշրջաններից. — Ներշնչականութիւնը և նրա ասաբնանները. — Կիսարթնութիւն.

ԲԺԻՉ ԲՐԵԽՈՒ ՓՈՐՃԵՐԸ.

Թովչութեան ուսումնասիրութիւնը վերին աստիճանի հետաքրքրութիւն, որովհեան նա մի նոր աշխար է բանում մնր առաջ. Ակդ սպաժառով ալս զմի վրա դարձում ենք ընթերցողի բալոր ուշադրութիւնը.

1883-ին ծովալին բժիշկ Բրեմօն (Bremaud) Պարիզի հոգեկանական ընկերութեանն արած զեկուցման մէջ լաւառում է, որ նրան լաջողել է առ ողջ երիտասարդ զնուր երին զցել մի նոր հիպնոտական դրութեան մէջ, որը մօտենում է նողնչափ քարացմանը, որչափ և քնապածութեանը ու ալս երկու շրջանների մէջ մի միջանկալ զիրք է բանում.

Այս միջանկալը շրջանում հիպնոտածը մի ոտք զրած ունի քարացման, մրւաք քնապածութեան մէջ և որենին մի կողմից ներկարացնում է քարացման հաշանները, միւս կողմից քնապածութեան արտակարութիւնները.

Փորձերն արած էին Բրեմօնի ծովալին ուսումնարանում երիտասարդ բժիշկների, ուսանողների, դինուորների, սպաների վրա. Պարիզում մի նիտախ մէջ Բրեմօն կարողացաւ բարձաթիւ անձերի ալս զրութեան մէջ զցել և ալսով գիտնական աշխարի ուշքը մի շարք նոր և զարմանալի երեսլիների վրա դարձրեց.

Այս նոր հիպնոտական դրութիւնը բժ. Բրեմօն կնքեց Fascination անունով, որը մնաք կը թարգմանանք Հրապութիւն կամ Թովչութիւն բառերով (սպարակերէն լալտնի ալլուսնը).

Հրապութիւն միջոցն երը. — Ակնակցութիւն.

Հրապութեալու ամենալաւ միջոցն է, արագ, անսպասելի կերպով նախել ենթակալի աշքերի մէջ, հրամակելով նրանէլ սկսոել իւր հակացքը ձերի վրայ և հետեանքը հայ անելիէ, ասում է Բրեմօն. Դէմքը կարմրումէ, աչքերը բաց են, բիրերը լանջացաց. — արուճեան նրա հակացքը մնխած է ձեր աչքերին, ևս ետնումա հմ դնում, որը. Հ-ը հնուսում՝ ինձ աչքերը լառած

գծագրութիւնը անշարժ, դէմքը քարացաց: Կարծես նրա ուղիղում մի միտք է միան մնացել՝ չկորցնել աչքերիս բիբերի փալը...»

Աչքի սնեռումն, ճշմարիտ որ, մի զարմանալի երևոթ է, Նիկ հրապուրողը աչքերը զետին քցի, հրապուրած կ'կուանակ և կ'արունակի ներքից նակել նրա բիբերին, Նիկ հրապուրողը շուռ գաէ հմալածնէլ շուռ. կը գալ, եթէ առաջինը ձեռները դնի աչքերին, ոս ուժով կը պոկի ալդ ձեռները երևից, որ չկորցնի իրան թովող աչքերը:

«Խօսեցէք նրա (թովածի) հնա, ասումէ Բրմծն, նա չի պատասխանիլ, անպատճեցէք նրան, նրա դէմքի վրա ոչ մի թել չի կնճռւիլ հարւածեցէք նրան,—նա ցաւ չի զգալու, «Սական ենթական հասկանումէ իւր դրութիւնը, ամելացնում է կիւլերը, նա փշում է իւր շուրջը կատարած ըաները և զարթնելիս կ'պատմի իւր բոլոր զգակածը».

Ակս զարմանալի երեսթը լալոնի է Ակնակցութիւն կամ Հայեացքի կցուրդութիւն անունով (Prise du Regard)

Դունատօն և Հանգենը:

Հայեացքի կցորդութեան ամենաղարմանալի փորձերը տեսել եմ ես արտասահմանում, երբ հրապարակական մագնիսումն զեռ. արգելած չեր նս տեսել եմ Դոնատօին և Հանգենին, ալս աշխարհուոչակ մագնիսողներին կամ հիպնոտղներին, որոնք թատրոնական ընմի վրա, բազմամարդ հասարակութեան առաջ, զարմանալի հեշտութիւնով թովում էին ցանկացողներին: Երկուանէլ ընտրում էին երիտասարդներին, որովհետև կանանց և ծերերի վրա թովութիւնը շատ դժւարէ լաջողութ:

Դոնատօն (DONATO) մի սիրունանաես սև մազերով ու սև խոշոր աչքերով բերգիացիէ: Նա հրափրում էր հանգիսականների միջից ցանկացողներին, կարգով կանգնեցում էր նրանց բնմի վրա, վետոյ մօտենալով ամեն մէկին դնում էր իւր ձեռները նրա ձեռների մէջ, մի քանի բուլէ սեղմնէր տալիս և լանկարծ անսպասելի կերպով համարեա կողյում է երմուը հիպնոտղի երեսին, հրամակելով նակել ուղիղ իւր աչքերի մէջ, Յետու վետէր գնում, պտութներ էր անում, կուանում, վազում, միշտ ենթակալի աչքերին նակելով, և երիտասարդը հետեւում էր իւր թովին, չ'կարողանալով պոկել իւր հակեացքը նրա հակեացքից.—կարծես մի երկաթէ շուրջ անցելէր երկուսի աչքերի միջով... Այս հմալողը անկարողէր լինում ազատում իւր հմալածից, որը կապիկի նման հետեւում էր նրա շարժումներին, քավում, էր նրա հետ նստում, պատուում և ալլն: Դոնատօն ալս, ձանձրացնող բարեկամից ազատելու համար, ձեռով ծածկում էր իւր աչքերը, որ հմալածի հակեացքը սնեռով ալլ ձեռի վրա և լանկարծ ձեռը բարձրացնում էր վեր և պարզում էր դէպի առաստաղը: Այս ժամանակ ենթակալի աչքերնէլ պոկելով հրապուրողի հակեացքից, սնեռուում էր առաստաղին և թովածը մնում էր անշարժ, զլուխը բարձրացրած, աչքերը մի կէտի լատած, անզգաւ արձանի նման...

Զարմանալի է հակեացքների կցորդութեան ոժը: Դոնատօն թատրո-

նում թովում էր ցանկացողներին բնմի վրա, զանազան փորձներ էր անում, վետով ուշքի էր բնբում նրանց, երեսներին փշելով և ուղարկում էր իրանց տեղերը Մի քիչ վետով, նա մօտենում էր բնմի բամպին, խոշոր բանում էր աչքերը և ուժգին ձանով դռնում էր. «եկէք!», զգուշացնելով լոժաներում և զալլերէում նատողներին, որ չնակեն իրան. Այն ժամանակ երիտասարդները խելագարների նման վերէին թռչում իրանց աթուների վրավից, աչքերն դէպի իրանց հրապուրողը լաւած, զարմանալի արագութիւնով թռչում էին հանդիսականների զլիների վրանով, կատաղած զաղքերի նման գցում էին իրանց բնմի վրա, աչքերը Դիօնասոփի աչքերին սենուած, մինչև որ ալս վերջինը, արդէն լաւտնի ձեռվ, չէր գարձնում նրանց հակեացքը դէպի առաստաղը.....

Հանգենը (Hansen) աւելի խիստ ձեռն է դործ դնում, Նա նիհար զեղնած երիտասարդներ է ընտրում, սրտում է նրանց արագութիւնով, մինչև որ լոգնեն, վետով լանկարծ ծռում է նրանց մէջքը և սենուում է աչքերը...

Սական հրապուրանքի ալս միջոցները բաւականին գռեհիկ և ցաւեցնող միջոցներ են, ինչպէս ասում է բժ. Լաղամը.

Լիսլիսը գործ է ածում միննուն նապատակով իւր հնարած «պատւող» հակելինոց, ննթակավի հավեացքը հարւածում է միշտ պատւող հավելից նետած լուսից և սենուած է մնում.

Հրապուկը կենդանին երի մէջ,

Ալս երկու միջոցներն էլ գուցէ ամենահին ժամանակներում լավանի էին մարդկանց, որոնք գործ էին ածում հալեացքի սենուումն զաղաններին սանձելու համար, իսկ որորդները ալսօր ևս փակուն ապակիներ են կախում ծառերից թռչուններ հմակելու, որոնք մի առանձին ձգտողութիւն են զգում դէպի ապակիի փակը և մնում են քարացած նրա դէմ.

Յալոնի է, որ «պազաններ սանձողները» աչքերի կցորդութիւնով են հրապուրում առիւծներին, վագրերին, օձերին, որոնց վանդակն են մտնում և որոնց թռվելով անվնաս են զարձնում. Ամեն մարդ կարող է առիւծին սանձել, եթէ չը կարի իւր հավեացքը զազանի հավեացքից, եթէ չը փախի և համոզած լինի, որ կարող է թռվնլ նրան.

Բայց ալս զեռ բոլորը չէ.

Յալոնի է, որ կենդանիներն էլ ընդունակ են իրար թռվելու օձի թռվական ազգեցութիւնը գորտի և մկան վրա, գիշակեր թռչուններինը (ձկանկուլ) ձկների վրա լավանի են ամենին. Ալս թռչունները վերերից հիպնոսում են ջրի մէջ ձկներին, որոնք հրապուրած անշարժանում են և ընկնում իւր թշնամու ձեռը. Նոկաչս մուկը քարանում է կատափ հաւեացքից և զո՞ն գնում, նոկաչս և կաքաւը թռվում է շան աչքերից.

Բժիշկ Բրեմօն իւր ենթականներին մի գործ է կատարել տալիս և գործողութեան միջոցին հրապուրի մէջ է գցում նրանց.

Այս խնդրում եմ Ս.-ին, առում է նա, ուժով իր բուռը մեղմնել և ուսիս որքան կարող է ուժգին հարած տար Երր չնմ նազում, նա խիսում է ինձ ապնալիսի մը ուժով, որը պատիւ է բերում նրա մկանների զօրութեանը, բայց երբ լանկարծ նաբում եմ նրա աշքերի մէջ, նրա ձեռը քարանում է ողի մէջ...

Այս խնդրում եմ Մ. Զ.-ին հաշմն բարձր ձախով. ոմէկ... երկու... երեք... և ավել. Համբաւու միջցին ես շատ մօտ սենում եմ հավացքն նրա աշքերի մէջ, խկովն նա մկան է տատանմէլ խոտ լուսմ է հրապուրած, որովհետեւ նրա ծնօանները և լեզուն քարանում են.

ԱՄ. Զ.-ին խնդրում եմ գետնից թաշլինակը վերցներ նա կուանում է, թաշկինակը բարձրացնելիս նազում է աշքերիս, ու խկովն, ձեռները և մէջքը քարացած, մեռում է անշարժ ալս անկարմար (կուացած) դրութեան մէջու.

Դոնատօն աւելի ես զարմանալի փորձեր էր անում Հանդիսականներից հրակրած երիտասարդներին հրապուրելուց լետով, նա սրանց քարացման մէջ էր զցում, աշքները առաստաղին ընենուած, Յետու ներշնչում էր նրանց իրանց ստվորական երդերը երդել ու երբ հրապուրածը մի քիչ երգում էր, Դոնատօն արագ մօտենում էր նրան ու ձեռը դանակի պէս անց էր կացնում նրա բերանի դէմ և խօսքերը կիսից կտրում.—Ենթական սկզբն լուսմ էր, խկ երբ նա մի քիչ լետով հրամաւում էր շարունակել, թովածը շարունակում էր երդել կիսատ բառի մեացած մասից.

Առասարակ թովէութիմը ուսումնասիրելիս մենք պատահում ենք երկու կարգ երեսովների, որոնցից մէկը քարացման շրջանին է պատկանում, խկ միւսը բնապածութեան.

Քարացման երեսութն երն են են.

Լաշու կատարեալ անզգալութիւն. Մենք կարող ենք ծակել, ալրել նրա կաշմն,—հրապուրածը ովհնչ չի զգաւ. Միւս լատկանից—անզգամեների քարացումն է, որի մասին խօսել ենք.

Մի հմագածի, Մ. Ս.-ին բրեմն ամեն տեսակ նմանողական շարժումներ էր անել տալիս.

Այս ծիծաղում եմ, առում է ալս բժիշկը, նա էլ է ծիծաղում, ես բարձրացնում եմ ձեռս, նա միենուն է անում, ես թռչուսում եմ, կնճռում եմ դէմքս, —նա օրինակում է իմ բոլոր շարժումները ես խօսում եմ, Մ. Ս.-ը կրինում է խօսքերս, ձախու օրինակելով. Միենուն արտասանութեան հեշտութիւնով նա օրինակում է և օտար գերմաներէն, անզլիէրն, սպանէրէն, ռուսէրէն և չինարէն ֆրազներու.

Առասարակ ալտանեղ կարող ենք կրկնել ինչ որ ասել ենք նմանողութեան կամ կապիկութեան մասին քարացման շրջանում.

Բայց ալս բոլորը զոհնիկ երեսովներ են.

Արթեան կեանքի մէջ մենք համարեա ամեն քալավոխում ենթարկում

ենք նմանողութեան կամ օրինակման (ոօդրայան) օրէնքի ազգեցութեանը:

Այս ազգեցութիւնը այնքան մեծ է, և անշափ կարենոր, որ մենք նրան տա անձնապէս պիտի ուսումնակրենք լուրածին երկրորդ մասում, Առաջմ կ'առմամ միայն, որ քաղաքակրթութեան, տարապի, կենցաղավարութեան ձեի, վերջապէս, դաղախարների տարածւելը, մի հասարակութիւնից միւսն անցնելը, նմանողական օրէնքով է կատարուում:

Քնարածական երեսութեան բ:

«Քնարածութեան լսուով երեսութեանը հնատեալներն, են, ասում է վեպի որ. — թուլածները լսում են, պատասխանուում են հարցերին, — նրանց ձակնը փոխած է, — նրանք չը գիտեն, թէ որ անդ են, — զաճախ իրանց հնա խօսողին չին ճանաչում, — քնարածի նման զիւրահաւաստ են և ամեն լսած բանի հաւատուում են և ուրիմն բնդունակ են հնշութիւնով ներշնչմուս չաղւագիտ ծառաւթիւնով կատարուում են նրանք ներշնչումն թէ իրան և թէ մի ժամանակից լսաւը Այս տեսակէտից հրապուրածները մինչուն կերպով են վարուում, ինչ որ մեծ հիպնոսի մէջ գտնողները:

Եւ ճշմարիտ, որ հրապուրածին մենք կարող ենք նողնակիսի ներշնչումներ անել ինչոր քնարածին:

Դունատօն իւր հնթականներին գետնախնձորը տանձի տեղ էր կերցնուամ, լուծողական ձեթը Բորգօն գինու տեղ խմ.ցնուամ, կամ շոք ու ցուրտ էր զգալ տալիս իւր հրապուրածներին, և մի խօսքով կրկնում էր համարեա ան բոլոր փորձերը, որոնց մենք ուսումնակրթունքինք քնարածութեան մէջ.

Ակապէս, կարելի նրանց առաջ պատրանքներ և ցնորքներ լարուցանել շարժողական և զործողութիւնների ներշնչումներ անել. Միաւն այս ներշնչումները չը պէտք է բարդ լինեն:

Բրեմօն կարողացել է հրապուրածի մէջ մինչև անգամ անձնատրութեան փոփոխումն լարուցանել:

— Ինչպէս է ձեր անունը, հարցնում է նա ենթակալին.

— Ֆ., պատասխանում է նա.

— Ո՞չ, պարոն, զուք սուս էք ասում, ձեր անունը Բերտրան է,

Այս ժամանակ նրա աշխերը արճակալում են և բնեռուում են հրապուրովի վրա, բիբերը լանջացած, դէմքը կարմրատակած... լսուկ կամաց-կամաց, մինչդեռ Բրեմօն կրկնում է համոզիչ կերպով Բերտրան անունը, ենթական մէկ մէկ կորցնում է իւր անւան վանկերը և նրանց տեղը իւր նոր անւան վանկերն է դնում:

Ակապէս, հրապուրակին կամ թովչական երեսութեարը մի խառնուրդ են քարայրման և քնարածութեան արտակատութիւնների:

Այս հիման վրա հրապուրը մենք, շատերի հետ, ընդունում ենք իրեւ մի մըջանկեալ դրութիւն, որը իրաւացի կերպով կարելի է անւանել.

Կիսաքարացումն—Կիսաքնայածութիւն (Etat Catalepto—Somnambulique)

Ակա միջաշրջանի մէջ նկատած ամենանշանաւոր երևոլմներից մէկն է հակեացքի կցորդութիւնը կամ ակնակցութիւնը, որից լառաջանումէ աչքերի սևեռումն և ամբողջ մարմնի ժամանակաւոր քարացումն.

Ակա երեղոլթը, որը բրեմօն և ուրիշները փորձնական կերպով լարուցեցին, մի առօրեակ երնովթ է բնական զրութեան մէջ, Ամենքին լատոնի է, որ երբ մարդու տեսանելիքը անսպասելի կերպով լարւածւում է մի պատկերից, երբ մարդու աչքի առաջ մի սարսափելի գէպք է պատահում, կամ երբ մի վտանգ սպառնացող բան է երեսում,—ալդ անձն, ինչպէս ասում են, շկկում սառչում է, իրան կորցնում է, ուրիշ խօսքերով՝ ընկնում է բողէական թով-չութեան մէջ, Երբեմն քնի մէջ զազաններ են լարճակում մեզ վրա և մենք չենք կարողանում փախել կարծես զմռւած լինենք:

Արթնութէան մէջ էլ մենք համարեա իւրաքանչիւր քալափոխին ենթարկում ենք մի որ է զորդ հրապուրիչ աչքերի աղղողութեան, Զեր հակեացքը ակցորդում է ալդ զեղեցիկ կնոջ աչքերին, և զուք մի բոպէ սառչում—էք քարանում, երբեմն կանդ առնում ու մինչև անդամ ետ զառնում, որ չը կորցնէք նրա հակեացքը, Ակա է պատճառը և ան օտարութ երևոլթին, որ եթէ, երբ զուք արդէն անցել էք ալդ կնոջ (կամ տղամարդու) առաջով և հակառակ կողմը հեռացել ետ զառնաք, որ մէկէլ նակեք նրան, կ'տեսնէք, որ նա էլ է շուռ եկել, ու ձեր հակեացքները կրկին կը պատահեն իրար

Կան մարդիկ, որմնք չփոթում են, շկկում իրանց գործողութիւնների մէջ, երբ զիտեն, որ մէկը ուշագրութիւնով նպաստ է նրանց: Սև ճանաչում եմ շատ պիանիսաների, որմնք չեն կարող ածել, եթէ մէկը նրանց մօտ կանդնած լինի, Շատ դիտնականներ չեն կարող խօսել հասարակութեան առաջ և ալլի:

Աշխատանքիս երկրորդ մասում կը տեսնենք, որ այս հակեացքի կցորդութեան ոգժով լավողմել է երեխաներ և կանալք լախտակել:

Ժողովրդի մէջ հաւատումն կավ, իրը թէ կան մարդիք որոնք չար աչք ունեն և կարող են մէկին (կամ մարդու կամ անսասունի) աչքով տալ:

Բաց առնելով չափազանցութիւնները, որոնցով միշտ լիէ ժողովրդի փորձնական դիտողութիւնորը, ան հիմնական նկատողութիւնը, թէ աչքով տալ հնաւոր է, կարող է ճիշտ լինել և առա ինչպէս.

«Զար աչքիո վնասակարութեան զազափարը կազմել է երմի առն իրողութիւնից, որ մի քանի աչքեր, ինչպէս մե, խոշոր, փալուն աչքերը, ամելի հնշտ են շացնում կամ հրապուրում մեզ, քան թէ մանր, անդոն, անարտակալութիչ հակեացքը»

Կապուտ խոշոր աչքերը դուցէ աւելի զրափէ են, քան թէ ուրիշ դրվագները:

Այս կապուտ կամ ուն մեծ աչքանի մի անձն փողոցով անցնելիս կարող է հրապուրքի մէջ քցել պատահողներից շատերին. Սրանց հակեացք-ները սևեռում են միմնանց, հրապուրւածը լափշտակելով հրապուրիչ աչքերով ալլ ևս չի նալում իւր շուրջը, չի նկատում սպառնացող վտանգը, որովհետեւ այս բոտէիս նրա ամբողջ հոգեկան ողքը կենտրոնացած է հազեացքում. Եւ այս լափշտակման, այս հրապուրի մէջ, նա զիալչում է անցորդներին, փողոցի պատերին ու ծառերին, կամ ոտը սալթաքում, է վայր է ընկնում, կամ փոսի մէջ գլորուում կամ կառքերի տակ!...

Ամբոխը կ'ասի.—ալդ մարդը աչքով տւեց,

Մի ուրիշ օրինակ.

Այս մինենոն մարդը պատահում է մի կնոջ, որը մի երեխակ ունի գրկենու. Զար աչքը մօտենում է, գրկում է երեխակն, ամխ, ինչ սիրուն երեխակ է, ինչ չաղ էս-ասում է նա և հեռանում. Նախապաշարւած մօր սիրտը վախ է ընկնում, չար աչքը գովեց նրա երեխակն, ուրեմն սրան մի վտանգ է սպառնում, ու խեղճ կնօջ աչքերը լառած են մնում ալդ անձի վրա, նա հրապուրի մէջ է ընկնում, ապինքն՝ կորցնում է իրան ու տեղնուտեղը քարանում. Այն ժամանակ ալդ շնկած մօր թեները ու ոտերը թուզանում են և, եթէ հրապուրը մեծ է, նա կամ ինքն է վայր ընկնում, կամ երեխակն վայր քցում, կամ մի առարկակի խիռում նրան և ալլ:

Եւ ալդ մարդը կ'անիծի չար աչքը

Մի երրորդ զէպք:

Ալդ չարագուշակ մարդը ճանապարին պատահում է մի սալի երկու եղ լծած, կամ մի ձի լծած կառքի. Ալդ եղը կամ ալդ ձին նրան դուր են զալիս, նա նալում է կենդանիներին. Հրապուրւած կենդանիները, հակեացքի կցորդութեան պատճառով, սալթաքում են, վայր ընկնում, վլաս-ւում, կամ կառքը, սալլը փախցնում, ջարդուիչուր անում:

Բաւական է, որ մի երկու ալսպիսի դէպքերի պատճառ. Մնի մի անձն, որ վատ աչքին տիտղոսին արժանանաւ. Այն ժամանակ բոլորը նրա վրա խեթ աչքով կսկսեն նալիւ. Սա հասարակութեան վնասակար անդամ կը դառնալ և ակնուհետեւ ախ բոլորը, ինչ որ նա կարող է աչքով տալ թաղցրած է նրա չար աչքերից:

Եւրոպալումն էլ չատ տեղեր, մանաւանդ խտալիալում, հաւատում են այս վատ աչքերին, որոնց jettatores անուն են տալիս:

Փոքր չի ալն ոսի անունները:

Վերջացնելով հրապուրի (fascination) ուսումնասիրութիւնը, մննք, ընթերցողի լարմարութեան համար, ուզում ենք առաջ բերել այն զանազան անունները, որոնք տրտում են այս հիպնոսական դրութեանը:

Անա աղդ անուները, որոնց նշանակութիւնը մի է¹⁾,
Փոքր Հիպնոտիսմ.—Petit Hypnotisme—Малый Гипнозъ.

Թովվութիւն.—Fascination—Обвождение.

Հայեացքի կցորդութիւն կամ Ակնակցութիւն.—
Prise du regard—Справление глазъ.

Հրապուք (Հրապուրանք).—Charmie—Очарование.

Կիսաքարացումն—Կիսաքնաւածութիւն.—Etat cataleptique—сомнамбулика—Каталепто-сомнамбулическое состояние.

Ընդհանրապէս հեղինակները համարեա անխտիր դորձ ևն ածում ապս բոլոր անուններն էլ, Պարիզի գրողները լաճախ դորձ ևն ածում Փոքր Հիպնոտիսմ անունը, հակադրելով ապս դրութիւնը Մեծ Հիպնոտիսմին, իւր դասական երեք շրջաններով.

Այն միջաշրջանները, որոնց նկարագրեցինք Ակիսաանզդանութիւն-Լիսաքարացումն—Լիսաքնաւածութիւն անուններով, դասական հիպնոսի երեք աստիճանների վրա երկու աստիճաններ էլ ևն աւելացնում, Ուրիշն ընդամննը կ'ունենանք հինգ աստիճան, որոնք են.

1) Անզդակական քուն (Անթարգիա),

2) Լիսաանզդանութիւն—Լիսաքարացումն (Անթարգո-Լատալեպսիա),

3) Քարացումն կամ Արձանացումն (Լատալեպսիա),

4) Լիսաքարացումն—Լիսաքնաւածութիւն կամ Թովվութիւն, կամ

Հրապուր, կամ Փոքր Հիպնոտիսմ (Լատալեպո-Առնամրուլիսմ),

5) Քնակածութիւն (Առնամրուլիսմ),

2-րդ և 4-րդը մնենք կարճութեան համար կ'անւանենք. առաջին և երկրորդ միջաշրջաններ,

Ապապէս, հիպնոսը վերջ ի վերջու Պարիզի դիտնականներն էլ բաժանում են հինգ շրջանների և ապս հանգամանքը անտարակում մօտեցնում է գոնէ ապս կէտով Պարիզի ուսմունքը Նանսիի ուսմունքին, որոյնեան ապս վերջինը միշա բողոքել է պարիզեցիների երեք շրջանների դէմ:

Ներշնչականութիւն և նրա աստիճանները:—Լիսարթութիւն:

Մենք տեսանք, որ հիպնոտածի ներշնչելու ընդունակութեանը, կամ մի խօսքով. ներշնչականութիւն աստիճաննը կախւած է հիպնոտական քնի աստիճանից. Մի աստիճանում ներշնչականութիւնը (suggestibilité, внушаемость) մնէ է, (ալինքն. հեշտութիւնով են ընդունում և իրագործում մեր տւած ներշնչումները), միասում նա թողլ է,

1) Մեր մեզւում մի շաբաք բառեր կան, որոնք անխտիր դորձ են ածում Փրանսիական charmer և ուսուած օբвождение ռառերի տեղու նրկաք որոնելուց յետոյ, մենք ընտրենինք թովվութիւն (օбвождение) և Հրապույթ (օчарование) բառերը:

Ամելի ճիշդ ասելով.

Քանի հիպնոսական նինջը խոր է, աւնքան ներշնչականութիւնը թուլ է, և բնդհակառակը.

Քանի այդ նինջը թեթև է, աւնքան ներշնչականութիւնը մեծ է,

Մի խօսքով.

Ներշնչականութիւնը աճում է հիպնոսի սանդուխտի ներքեցից վերև

Անզգաւական քուն—ներշնչականութիւնը զերո:

Առաջին միջաշրջան—քարացման մը քանի ներշնչումներ

Քարացումն—նմանողական ներշնչումներ միան (նմանողութիւն և կա-

պիկութիւն), բառացի ներշնչում դեռ չը կալ

Հըապուչը կամ թուլութիւն—նմանողական և բառացի թեթև ներ-

շնչումներ:

Քնակածութիւն—ներշնչականութեան վերին աստիճան, բառացի ամեն

ներշնչումներ

Ուրիմն ամենանշանաւոր ըրջանները ներշնչման վերաբերութիւնով ևն Փոքր Հիպնոս կամ Հրապուրը և Գնալածութիւնը,

Բայց աղ դեռ բոլորը չեւ:

Մենք տեսանք, որ անզգանութիւնից քարացումն, կամ քարացու-

մից քնարածութեան անցնելիս, հիսկոսածը ընկնում է միջանկեալ շրջան-

ների մէջ—մը հանգամանք որը հաստատում է, թէ այս շրջանների մէջ դա-

տարկութիւն չը կալ:

Գնալածութիւնից արթնութեան անցնելիս, էլ հիսկոսածը ոստումներ չի

անում, Այս փոփոխումն էլ առանց ցնցումների է կատարուած, ինչպէս

տռաջիկակ շրջանների փոփոխումն, և հաւանական է, որ ենթական կարող է մինչև արթնանալը միջանկեալ դրութիւնների մէջ ընկնել:

Այս նոր միջաշրջանը, ընկնելով քնարածութեան և արթնութեան մէջ, կը կրի մը կողմից քնարածութեան շատկանիշները, միւս կողմից ար-

թնութեան նշանները և նրա մէջ զանուղը մը ոստի կանգնած կը լինի քնարածութեան, միւսով արթնութեան մէջ:

Եւ այս միջանկեալ դրութիւնները իրոք դրութիւն ունին և գուցէ բազմաթիւ են, թէ առանձնապէս նկարագրած չեն:

Սակայն բազմաթիւ փորձերից կարելի է հետեւցնել, որ ալդպիսի միջանկեալ դրութիւններ արդէն նկատած են և նկարագրած, և մենք

արօր իրաւունք ունենք քնարածութեան և արթնութեան մէջ մը նոր մի-

ջաշրջան տուղթել—միջաշրջան, որի մէջ քնակածը կը ներկարացնի քնա-

րածական և արթնութեան երեսլթների մը խառնուած և որին մինք

6) Կիսարթնութիւն անոնը կը տանք:

Այս նոր միջաշրջանը հիպնոսական սանդուխտի վեցերորդ սառը կը լինի:

Կիսարթնութեան ուառանասիրութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ,
երեխ նրա մէջ է կատարուամ ան դրթիւ անհաւատալի երևութը, որը հե-
ղինակները նկարագրուամ են աներշնչումն արթնութեան մէջ՝ վերնազրով:

Սակայն հեղինակներին հետեւելով մնաք կը պահպանենք ալս վերնա-
գիրը և ալս ներշնչումն առանձին կը նկարագրենք:

Ներշնչումն արթնութեան մէջ — Suggestion à l'état de veille —
Внушение на язы.

Եթէ և այս տեսակ ներշնչումները կատարուամ են կիսարթնութեան մէջ. — Հաստատու-
թիւններ. — Բերնհայմի փորձերը. — Ներշնչումներ:

Մինչև ալժմ նկարագրած ներշնչումները թելադրուամ էին հիպնոսա-
կան քնի մէջ (կամ հրապուրի, կամ քնակածութիւն) և իրազործուամ էին
կամ զարձեալ քնի մէջ, կամ արթնանալուց վետով, մի որոշեալ ժամանակ.

Ալժմ մնաք գործ կ'ունենանք ալնպիսի ներշնչումների հետ, որոնք ան-
տուամ են և կատարուամ արթնութեան մէջ:

Մեր կարծիքով այն փաստերը, որոնց առաջ են բերուամ հեղինակները
հաստատելու համար, թէ բոլորովին արթուամ մարդն էլ կարող է ներշնչման
ենթարկել, բաւականին համոզիչ չեն, Ընդհակառակը բոլոր նկատումները
(առձիութեան) ապացուցուամ են, որ ներշնչումն ընդունուամ և կատարուամ է
միշտ քնի մէջ, միայն ալս քունը անքան թեթև կարող է լինել, որ կա-
րող է խառնել արթնութեան հետ:

Համարեա բոլոր հեղինակաւոր հիպնոսագէտների կարծիքով, ալս տե-
սակ ներշնչման փորձերը շատ հաղիւ են լաջողուամ ալնպիսիների վրա,
որոնք երբեք չեն հիպնոտած, Ընդհանրապէս նրանք են ընդունակ արթ-
նութեան մէջ ներշնչումներ ընդունելու, որոնք արդէն մի քանի անգամ
ենթարկած են եղել հիպնոտական փորձերի, կամ որոնք մի ներարդալին
հիպնոդրութիւն ունեն, ինչպէս հետեւերիա, ընկնաւորութիւն և ազն:

Նուն հեղինակները մեզ հաւատացնուամ են, որ հիպնոտիսի փորձերը
ամելի ջղակին, աւելի դիւրագրդիւ. են դարձնուամ ենթականերին և քանի
շատ են կրկնուամ ալդ փորձերը, անքան սաստկանուամ է նրանց հիպնոսա-
կանութիւնը և ներշնչականութիւնը Եւ ենթական վերջը հասնուամ է ալն
աստիճան դիւրագրդուան, որ բաւական է լինուամ նրան ասել. «Քնիր», կամ
մի մատը ցուց տալ, որ հիպնոտի:

Միենան դրութեանն են հասնուամ և հետեւերիկները ու ընկնաւորները.
Ուրեմն ամեն իրաւունքով կարող ենք պնդել, որ ալժմ նկարագրելի ներշն-
չումներն ընդունելու և նրանց հետեւելու համար ենթական արթուամ չի
մնուամ, ալ ընկնուամ է մի որ և է կիսաքնակին դրութեան մէջ, և աղդպէս
միայն կորցնուամ է ալն արգելառէծը, որի մասին մնաք խօսել ենք:

Նանսինցիք, որոնք առաջինն են ուսումնասիրել «Ներշնչումն արթնութեան մէջ», իրանք հաւատացնում են, որ քնարածութիւնը կարելի է երկուսի բաժանել, խոր և թեթև քնարածութիւններ խոկ առաջ բերած փաստերից կարելի է եղբակացնել, որ քնարածական դրութիւնները շատ են և որ ամենախոր քնարածութիւննից մինչև արթնութիւնը միշտը միջանկեալ դրութիւններ կան:

Հաւանական է ուրեմն, կրկնում ենք, որ այս ներշնչական երևովթները կատարում են այս միջաշրջաններից մէկի մէջ և ամելի իրաւացի կը մինէր այս տեսակ ներշնչումն՝ անւանել:

Ներշնչումն կիսարթնութեան մէջ:

Յերնհաւմի փորձերը.—Ներշնչումները թերենհավմը, որի անունը սերտ կապւած է ներշնչման հարցի հետ, 1883 թվին Բուանում հաւաքւած գիտնական ժողովին մի զեկուցում է անում, որի մէջ զիտնականների ուշը զարձնում է այն զարմանալի փաստի վրա, թէ կան անձեր, որոնք արթում միջոցներն էլ ընդունակ են ներշնչումներ ընդունել և կատարել Դիմոնապալիէն, Շարլ Բիչէ, Բոստէլը՝ Բրեմօն և ուրիշները հաստատեցին թերենհավմի փորձերը:

Անհա, օրինակ. Խ.ը, իմ հիւանդներից մէկը, որը ընտելացած է հիպնոսին, ասումէ թերենհավմը, և որը ընկնումէ թեթև քնարածութեան մէջ. Առանց քնեցնելու, ես նրան ասում եմ լանկարծ (ձերնե-քուրքուն). «Խիփնցէք ձեր ձեռը, այլ ևս չէք կարող բանալո», Նա ձեռը խփում է և իզուր ճիգ է թափում բանալ, ևս պարզել եմ տալիս նրա թեր, ձեռը բաց, անում և ասում եմ.—ագուք չէք կարող խիել ձեր ձեռը», Նա շատ աշխատում էին փելու բաց անկարող է.

«Ես ասում եմ.—«Պտուէք ձեր ձեռները, գուք չէք կարող կանգնեցնելո», — Նա անդադար պտառում է ձեռները մէկը միահ ետելից, ևս ամելացնսամեմ. — «Ձեր բոլոր ճիգը գործ գրէք կանդնեցնելու, եթէ կարող էք», Նա աստիկ աշխատում է, որ գոնէ ձեռները իրար կպցնի և աղղպիսով կանգնացնի. բայց ի զուր, ևս ինքս բանում եմ մի թեր, միւաը շարունակում է պտուս գալ, ու հէնց որ բաց եմ թողնում—կրկին պտուսում է.

«Զգացողական ներշնչումներ էլ կարելի է կատարել տապ իմ անձամբովներից մէկին բաւական է, որ ասեմ. «Ձեր ձախ կողմը անզգալ էն, և ազդ կողմը ազ ևս չի զգալ քորոցի ծակոցը... խոկ միւս կողմը զգալուն է, ևս կարողացաւ ամբողջ մարմինը ապահով անզգարացնել և անզգարացնել անպէս խոր, որ մէկ օր ազդ հիւանդին հինգ աստամը գուրս քաշեցին և նա ոչինչ չը զգաց.

«Զգալարանքներն էլ կարող են ներշնչման ենթարկել Նրա տեսանելիքը բնական է, ևս ասում եմ.—«Դու ձախ աչքով շատ լաւ և շատ հե-

ռու ևս տեսնում, իսկ աջով վաստ և շատ մօտու Յնսով կարդացնել եմ տալիս և ձշմարիտ որ նրա ձախ աչքը սրատեսէ, իսկ աջի լոտը պահասել, Նոյնը ականջների վերաբերութիւնով

Նոյն միջոցով կարելի կաթւած աչարութիւն, անդամն երի թուլութիւն լարուցանել. մի ձեռը, կամ մի ոտը, կամ երկու ոտները թրւացնել.

Բոստէլը երեք կանանց վրա ցողց տմբց, որ առանց հիպնոսելու կարելի է ամեն տեսակ թուլութիւններ և անդամալուծութիւններ առաջացնել. Հասարակ ներշնչումով Բոստէլը կարողացաւ նրանց խլացնել կուրացնել անզգալացնել և ամեն տեսակ ցնորքներ տեսնել տալ:

Մեծ հնատութիւնով լարուցում են ամեն տեսակ ցնորքներ և պատրանքներ. Մի խօսքով—ապա արթուրու անւանած դրսթեան մէջ մննք կարող ենք (ճշմարիտ է մնծ դժւարութիւնով) անել այն բոլոր շարժողական և զդացողական ներշնչումները, որ անում ենք սօնամբուլիսմու մէջ.

Նմանութիւնը աւելի լարածելի կը լինի, եթէ հաւատանք Ակնետուաի փորձերին, որը ներշնչումով արթուր մարդուն ամեն տեսակ զործողութիւններ է կատարել տալիս... մինչև անդամ սպանութիւն:

ԱՕՐԻՌԴ Պ.՝ Խ., ասում է ապա հնատաղօտիչը՝ ես ստիպում եմ իւր մօր վրա ատրճանակ (ի հարկէ երևակալական) արձակել. Պատանի չարագործութուն է անդունքին աւանդէս արթուրն է, ինչպէս և հանդիսական աները:

Բայց ալս արգէն Նանսիի գիտնականների չափազանցութիւններից մէկն էլ...

Կարելի է արդեօք ենթադրել անգամ, որ մի առողջ և արթուրն աղջիկ իւր մօր վրա ատրճանակ կրակի?

Կարծիք չկալ, որ ալսափսի ներշնչումներ միան հիպնոսի մէջ են հնարաւոր կրկնում ենք, որ ամելի հասկանալի և ամելի հաւանական է ենթադրել, որ ապա կարգի ներշնչումն էլ ինչպէս և առաջ նկարագրածներու, ընդունում են և կատարում կամթեթե քնակածութեան, կամ այն միջացրջաններից մէկի մէջ, որոնք քնակածութիւնից արթնութեան են տանում և որոնց մննք կիսարթնութիւն անսանեցինք:

ԳԼՈՒԽ Զ.

ՓՈՐՉՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐՈՒԹՈՒՄՆ

Խոչ է կիպնոտիսմը.—Նրա շքչանները.—Ներշնչումները.—Նրանց առաջին բաժանումն.—Նրանց երկրորդ բաժանումն.—Նրանց երրորդ բաժանումն.—Անձնաւորութեան երեսն երկուառումն.—Ֆերիդա Հ-ի պատմութիւնը:

Մենք վերջացրինք հիպնոտիսմի կարճաւոտ պատմութիւնը: Բայց աշխատանքիս երկրորդ մասին անցնելուց առաջ, աւելորդ

չի լինի համառօտել մինչև այժմ պատմածներս, որպէս զի մի ամփոփ գաղափար տանը Ընթերցողին հիպնոսական երևոյթների գասաւորութեան և համեմատական կարևորութեան վրա:

Ի՞նչ է հիպնոտիսմը:

Հիպնոտ մի արւեստական նեարդային դրութիւն է, որը աստիկ մօտ է Հիստերիա կոչւած հիւանդութեան:

Շատերի կարծիքով, հիպնոտիսմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արւեստական (փորձնական) հիստերիա:

Հիպնոտիսմի երևոյթները նկառւել են շատ հին պատմական ժամանակներում, բայց գիտնականապէս սկսեցին ուսումնասիրւել վերջին տարիներս միայն (1875 թւից), պատ. Ռիշէի և Շարկօի տւածուժգին զարկից յետոյ:

Ֆրանսիական գիտնականներին է պատկանում այս կարևոր գիտելիքի ուսումնասիրութեան պատիւը: Պարիզի և Նանսիի հետազոտողներին է պարտական գիտնական աշխարը, որ այսօր հիպնոսական երևոյթների խառնը պարզել է և որ հիպնոտիսմը այսօր նեարդային երևոյթներին շարքն է անցել:

I

Հիպնոտի դասական շրջանները:

Հիպնոսական նինջը ներկայացնում է մի քանի աստիճաններ, ամենախոր քնից մինչև արթնութիւն:

Դասական կամ Պարիզի (Շարկօի) վարդապետութեան համաձայն, այդ աստիճանները թւով երեք են. Լեթարգիա (անզգայութիւն), Կատալեպսիա (քարացումն) և Սոնամբուլիսմ (քնայածութիւն):

Այս երեք «հիպնոսական շրջանների» մէջ զետեղւում են հիպնոսի բոլոր յայտնութիւնները:

Հիպնոսածի բնաորոշն այն է, որ նա կորցրել է կամքը, արգելառյածը կամ կոնտրոլը:

Այս հանգամանքից հետեւում է այն զարմանալի անպայման դիւրահաւատութիւնը, որը ներշնչային երևոյթների պատճառն է:

Նեթարգիայի մէջ՝ հիպնոսածը մի դիակ է, առանց զգացողութեան և առանց շարժումների:

Կատալեպսիայի մէջ, բացի քարացման երևոյթները, նկատում են նաև նմանողական ներշնչումներ, որոնք յայտնի են նմանողութիւն կամ կապի կութիւն անուններով:

Սոնամբուլիսմը (քնայածութիւն) բնարոշում է նրանով, որ այս շրջանում ենթակայի զգայարանքները, յիշողութիւնը և մոարերումն գրեթէ անհաւատութիւն լարման են հասնում: Բայց այս շրջանի ամենանշանաւոր երևոյթը ներշնչումն է:

Նորագոյն հետազօտութիւնները ցոյց տեսցին, որ այս երեք դասական շրջանների մէջ երկրորդական շրջաններ ես կան, որոնց մենք միջաշրջաններ անտանեցինք և որոնք յատկանիշ նշաններ չունեն, այլ ներկայացնում են երկու հարևան շրջանների երևոյթների խառնուրդ:

Այս միջանկեալ շրջաններից առաջինը ընկած է Նեթարգիայի և Կատալեպսիայի, իսկ երկրորդը Կատալեպսիայի և Սոնամբուլիսմի մէջ:

Այս երկրորդ միջաշրջանը յայտնի է և Փոքր Հիպնոտիսմ կամ Հրապուրածի վրա մենք գոնում ենք թէ քարացման (Կատալեպսիայի) և թէ քնայածական (սոնամբուլական) երևոյթներ:

II

Ն Ե Ր Շ Ն Հ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը:

Հիպնոսի երևոյթներից ամենանշանաւորը անտարակոյս ներշնչումն է: Այս պատճառով թող ներսի մեզ մի քիչ երկար կանգ առնել այս երևոյթի վրա, որպէս զի ընթերցողը կարողանաց մի հայացքով ըմբռնել ներշնչման փաստերի ահազին կուտակումը:

Ներշնչումն հիպնոսածի այն զարմանալի ընդունակութիւնն է, որի շնորհքով նա ընդունում է և կատարում ներշնչողի թելագրութիւնները:

Ներշնչման միջոցով մենք յարուցանում ենք անդամալուծութիւններ, ամեն տեսակ անզգայութիւններ. կուրութիւն, խլութիւն, ճաշակի, հոտոտելիքի անյետանումնեւ:

Ներշնչման միջոցով մենք փոխում ենք հիպնոսածի աշքին առար-

կաների գոյնը, մեծութիւնը, ձեր. — մատիտը դաշոյն դարձնում, կամ դիրքը կատու (սպառանք — ԱԼԱՅՅԱ):

Ներշնչման օրէնքով ենք տեսնել տալիսնրան բացակայ առարկաներ, կամ անլետացնում նրա աչքի առաջ գտնող իրերը (ցնորք — գալլուցիավիճակ):

Ներշնչման ազդեցութիւնը այն աստիճան գորեղ է, որ կարող է փոխել հիպնոտածի ամրող հոգեկան և մարմնական աշխարը, նրան ապակեղեն, կամ մեղրամոմից շինած դարձնել, կամ փոխել նրա հասակը, սեռը, նրա անձնառութիւնը, մինչեւ անգամ նրան շուն շինել...

Մի խօսքով, ներշնչողի բերնից դուրս թռած մի բառն անգամ բաւական է, որ մի նոր աշխար բացւի քնայածի առաջ, աշխար, որի մէջ նա երևակացութիւնով կը շրջի, դիտելով ամենասքանչելի բնութեան տեսարաններ՝ անտառալիսիտ լեռներ, նաւերով ծածկւած ծովեր, ծագկալից դաշտեր, ամբողջ բնութիւնը լի հրաշալիքներով, պանչելի արեւով ափոած, հրապուրիչ և սոսկալի խւր յափշտակող վեհութեան մէջ: Եւ ինքը ներշնչւածը, իրական աշխարից վերացած, ներշնչման թեւերի վրա շրջում է կամ սաւառնում այս երևակայական երկրի երեսին, արեւի ճառագայթներով փայփայած, ծաղիների բուրմունքներով արբեցած, ծով, ցամաք, քաղաքներ, դաշտեր ոտի տալով, իջնելով ծովի յատակը կամ ամսերի վրա լողալով, մտնելով տներ, խուռն ամբոխի մէջ, խւր կորցրած սիրելիների գիրկն ընկնելու: Եւ հոգին զբայլած, սիրտը մի անասելի երջանկութիւնով լցած նա, ներշնչողի յանցքին համեմատ, կը բարձրանայ երկինք, կը շրջի դրախտի մէջ, հրեշտակներով շրջապատած, և կը մօտենաց Ստեղծողի առողջի Մեծութեան!...

Հիմի փոխեցէք ձեր ներշնչումը — և դուք կը գահավիժեք նրան դժոխքը, ուրաւականներով և դարշելի հրէշներով լի դժոխքը, որը գուեհիկ ժողովրդի երևակացութիւնը լցրել է զարհուրելի դարշելութիւնով:

Հիպնոսի մը շրջանումն է կատարւում ներշնչումն:

Քարացման շրջանից մինչեւ արթնութիւն ենթական ընդունակ է ներշնչումներ ընդունելու և իրագործելու: Նրա ներշնչականութիւնը ամուսնութիւնը է ներքելից վեր, համնելով խւր գաղաթնակէտին կիսաքնութեան շրջանում:

III

Ներշնչումների առաջին բաժանումը:
Ներշնչումը մենք բաժանեցինք երեք կարգի.

1) Նարժողական ներշնչումներ:

2) Զգացողական ներշնչումներ:

3) Գործողութիւնների ներշնչումներ:

1) Նարժողական ներշնչումների անդամականացանում ենք
շարժումներ, անդամականացանում է անդամի թու-
լութիւն:

2) Զգացողական ներշնչումների մենք ենթակալի մար-
ժի մասը, կամ նրա ամբողջ մարմինը անզգայ ենք դարձնում,
նրա ճաշակելիքը, հոտոտելիքը թուլացնում, կամ ընդհակառակը.—
Նրա կաշին դիւրագրգիռ դարձնում և առհասարակ բոլոր զգայա-
րանքները զարմանալի լարման հասցնում:

Բացի այդ, ներշնչման միջոցով մենք յարուցանում ենք պատրանք-
ներ և ցնորքներ, փոխել ենք տալիս ենթակալի անձնաւորութիւնը,
արնազրութիւններ (ցուցման) առաջ բերում և այն:

3) Գործողական ներշնչումների միջոցով մենք թե-
լադրում ենք բարդ գործողութիւններ, լի պատրանքներով և ցնորք-
ներով,—գործողութիւններ, որոնք պիտի կատարեն կամ քնի մէջ,
կամ արթնանալուց յետոց, մինչև մի տարի ժամանակ:

IV

Ներշնչումների երկրորդ բաժանումը

Նայելով թէ ինչ միջոցով ենք մենք ներշնչումներ յարուցա-
նում, այս վերջինները պիտի երկու կարգի բաժանել.

1) Նմանողական ներշնչումներ (suggestion imita-
tive), որոնք յայտնաւում են կատալեպսիալի (քարացման) և Թովլու-
թեան մէջ: Այս այն է, ինչ որ մենք նկարագրեցինք նմանողու-
թիւն կամ կապիկութիւն անունով և կայանում է նրանում,
որ հիպնոսածը կրկնում է մեր շարժումները: Այն ներշնչում-
ները կատարում են ուրեմն տեսչութեան միջոցով:

2) Առօղական ներշնչումներ (suggestion verbale),
ամենակարևորները, որոնք նկատում են միայն Հրապուրան-

քից վեր մինչև արթնութիւն։ Քանի մենք մօտենում ենք արթնութեան, այնքան աւելի հեշտանում է ներշնչումներ անելը։ Այնպէս որ շատերը ընդունակ են դառնում ներշնչւել չափազանց թեթև հիստոսի մէջ, այն աստիճան թեթև, որ շատ գիտնականներ չեն կարողացել որոշել, ինչպէս ասում է Ժիլ Վը Տուրետը, թէ այդպիսի գէպքերում քնած է ենթական, թէ զարթուն և մինչև անգամ նկարագրել են մի շարք ներշնչալին երեսյթներ ներշնչումն արթնութեան մէջ։ անունով՝

V

Ներշնչումների երրորդ բաժանումն։

Կան ներշնչումներ, որոնք մօտացում են զարթնելուց յետոց, կան և այնպիսիներ, որոնք մնում են քնացածի յիշողութեան մէջ։

1) Հրապուրանքի և կիսարթնութեան մէջ (արթնութեան ըստ հիպնոսագէտների) ստացած ներշնչումները մնում են հիպնոսածի միշողութեան մէջ։ Այնպէս որ ներշնչածը արթնանալուց յետոց պատմում է իւր տեսածը ու կատարածը։

Այդպիսիներից շատերը արթնելուց յետոց պատմումեն, թէ ներշնչումներն ստանալիս նրանք աշխատում էին դիմադրել և չը կատարել ներշնչած գործողութիւնը, բայց կորցրել էին իրանց կամքը ու ստիպւած էին թելադրման հպատակել։

Երբ նրանց ցնորդներ են ներշնչում, օրինակ, ասում են. «Ճերառած առիւծ է կանգնած», «հիպնոսածը սկզբում ծիծաղում է ծաղրում է հիպնոտղին», որ սա իրան խելագար է կարծում Բայց կամաց կամաց, մինչդեռ հիպնոսող հեղինակաւոր ձայնով կրկնում է նրան ներշնչումն, ենթական (հակառակ իւր կամքին) սկսում է մի ինչ որ ստեր տեսնել, այս ստերը կամաց կամաց առիւծի ձեւ է ընդունում, ոգի է ստանում... և ներշնչածը չի յապաղում տեսնել իւր առաջին այս առիւծը, լսել նրա մոնիթուրը, տեսնել նրա աչքերի փայլը և այլն, թէն մինչև վերջ նա համոզւած է, որ այս իւր երեւակայութեան պատուղն է։

2) Խսկական Քնայածութեան մէջ արած ներշնչումները բոլորը մօտացում են զարթնելուց յետոց և մօտաբերում են միայն յետագայ Քնայածութեան մէջ։

Այսպէս, Երբ մի անձն ընկնում է քնայածութեան մէջ, նա մտաբերում է իւր առաջիկայ քնայած դրութիւններում ստացած ներշնչութերը:

Ուրեմն այսպիսի անձերը երկու կեանք կ'ունենան. մէկը արթուհ, միւսը քնայած:

Երբ այս անձը քնայածութեան մէջ է, նա բոլորովին մօռանում է իւր արթնութեան մէջ անցկացրած կեանքը և յիշում է այն կեանքը, որը նա նախընթաց քնայած դրութիւնների մէջ է անցկացրել:

Իսկ երբ նա արթնութեան մէջ է, մոռանումէ իւր, այսպէս ասած, քնայածական կեանքը:

Այս քնայածական կեանքը կարող է շատ երկար լինել, այնքան երկար, որ մի որոշեալ անձի կեանքի մի նշանաւոր մասն կազմել:

VI

Անձնաւորութեան երկուսումն:

Բազմաթիւ օրինակներ ցոյց են տալիս, որ կան անձինք, որոնք բնականաբար ընկնում են քնայածութեան մէջ և մնում այս դրութեամբ ամբողջ ամիսներով: Այսպիսինների կեանքը երկու մասն է բաժանում, որոնց կարելի է անւանել արթուն և քնայական կեանք:

Բժիշկ Ազանը առաջինն էր, որ գիտնական աշխարի ու շատրութիւնը այս օտարութի երկոյթի վրա դարձրեց, նկարագրելով տիկին Ֆելիդա Հ-ի կեանքը:

Այս դրութիւնը այսօր յայտնի է, Անձնաւորութեան (Ինքնութեան) երկուսումն (Le dédoublement de la personnalité) անունով:

Ֆելիդա Հ-ի կեանքը անձնաւորութեան երկուսման մի զարմանալի օրինակ է:

Գուցէ մի օր յաջողւի մեզ մանրամասն քննելու այս օտարութի երկոյթը, այսօր թող ներւի մեզ միայն համառոտել այսուղ աշխարահոչակ տիկին Ֆելիդաի պատմութիւնը:

«1858-ին, ասում է բժ. Ազանը, ինձ հրաւիրեցին խնամնու մի ջանել աղջկակ Ֆելիդա Հ... անումով որին խելազար էին կարծում: Սա այն ժամանակ տասն և հինգ տարեկան էր: Ազ մի հիստերիկ կին էր, խիստ

աշխատասկը և խելացի, լուրջ բնաւութեան տէր և գրէթէ միշտ տխուրու աշամարժա ամեն օր, առանց լաբոնի պատճառի, կամ ամենափոքր խոպման պատճառով, նա ընկնում էր երկրորդ դրութեան (կամ քնաղած դրութեան) մէջ և առա ինչպէս.

Անա նստած է ու կար է անում, Յանկարծ նա ցաւ է զգում շնչերակ-ներում և քնում է խոր քնով, որից անկարելի է զարթեցնել նրան և որը տեսում է երկու երեք րոպէ, չետող նա կարծես զարթնում է, թաց ակմ նա նման չէ առաջւակ աղջկան, արժ.՝ նա ուրախ է, ծիծաղլոստ, երգելով շարունակում է իւր գործը, հանաքներ է անում, աւելի ընդունակ է զառել և այլ ևս չի զգում այն ցաւերը, որտնք տանջում էին նրան իւր բնական (արթուն) դրութեան մէջ, Այս նոր—երկրորդ դրութիւնը տեսում է օրական մէկից մինչև երեք ժամ, որից վետ Ֆիլիպան զարթնում է, բոլորովին մոռա-նալով ամենը, ինչ որ կատարել է այս դրութեան մէջ:

ԱԱկապէս, երկրորդ դրութեան մէջ ալզ աղջիկը իրան նվիրել էր իւր փեսացուին և մի օր, երբ բնական դրութեան մէջ էր, ինձ գանգատեց, թէ օտարութի բաներ է զգում փորումը Աղջիկը պարզապէս վզի էր, թաց ևս ոչինչ չ'ասեցի իրան: Մի բոլոքից վետով նա ընկաւ երկրորդ դրութեան մէջ և ասեց ծիծաղելով, «Ես շատ լաւ գիտեմ, որ վզի եմու:

ԱՀետեւեալ տարիները երկրորդ դրութեան մէջ ալզ աղջիկը իրան նվիրել էր իւր փեսացուին և հաւասարում է բնականին, Ակապէս, երբ Ֆելիդան ընկնում էր երկրորդ կամ քնաղած դրութեան մէջ, նա մոռանում էր այն ամենը, ինչ որ անցել էր նրա գլխով բնական (արթուն) կեանքում, և ընդհակառակը, բնա-կան դրութեան մէջ նա բռլորովին կորցնում էր մոռքից երկրորդ դրու-թեան մէջ անցած բաները:

Ցեառ ալս երկրորդ դրութիւնը աւելի ևս երկարելով, արթնութիւ-նից ամելի է տեսում, ախապէս որ, երկար տարիների ընթացքում, բնական կեանքը մի քանի օր էր միան տեսում, այն ինչ երկրորդ դրութիւնը ամ-բողջ ամիսներ և Նե Ֆելիդաի հողեկան դրութիւնը անտանելի էր, որովհետեւ նրա կեանքի մէջ դաստարկութիւններ էր գուանուա և նա փոխարինաբար առաջին կամ երկրորդ դրութիւնների մէջ ընկնելով, մոռանում էր իւր նախըն-թաց կեանքում կատարածածները, մինչև անգամ մոռանում էր իւր որդիկերանց, որտնք առաջիկաւ դրութեան մէջ էին ծնւել:

ԱՖելիդաի կեանքը, երեսուն երկու տարուց վեր, նմանում է մի գրքի, որի միջից մէկով, քսանով, երեսունով թերթեր են պոկած: Ինչ օտարութի ընթերցանութիւն: Եթէ մի թերթ միան պակասէր, դեռ կարելի կը լինէր մոռքին հետեւել, իսկ եթէ քսան թերթ է պատռած, ալզ անկարելի է:

ԱԱկապ Ֆելիդան քառասուն և իննը տարեկան է, Ցաս տարի է, ինչ երկրորդ դրութեան տեսողութիւնը կարճացել է, Բնական դրութիւնը կա-մաց-կամաց երկարեց, և ակմ հազիւ թէ ամիսը մէկ անգամ նա կ'ընկնի

իւր քնարածութեան մէջ, աճ էլ մը քանի ժամով մրալն, Ակնպէս որ Ֆելիդան համարեա բժշկմէ է»:

Նսյնանման դէպքեր առաջ են բերում ուրիշ հեղինակներ ևս, բայց ցաւակցարար մենք չենք կարող աւելի երկար կանգ առնել այս հետաքրքիր երևոյթի վրա:

Ահա փորձնական կամ յարուցած Հիւկնոտիսմը իւր նշանաւոր արտայայտութիւններով:

Ընթերցողը պիտի միշտ նկատի ունենալ արւեստական հիպնոսի երևոյթները, որպէս զի նրան հասկանալի լինեն բնական հիպնոսի յայտնութիւնները, որոնց մասին պիտի խօսենք այս աշխատանքի երկրորդ մասում: